ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 40

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

28-ը սեպտեմբերի 2019թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 28-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում: /Զեկուցող **Մ. Ս. Աթոյան/**

2. 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում: /Զեկուցող **Ա. Ց. Դավթյան/**

3. ԵՊՀ ԻՄ-ի 2020թ.-ի առկա ուսուցմամբ ընդունելության բակալավրի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի քննարկում: / Զեկուցող **Ա.Հ. Մակարյան** /

4. «Ակունք» գիտամեթոդական հրատարակության հետագա գործունեության մասին: / Զեկուցող **Ա.Հ. Մակարյան** /

5. ԵՊՀ ԻՄ-ի 25-ամյակի հետ կապված միջոցառումների կազմակերպման մասին: / Զեկուցող **Ա.Հ. Մակարյան** /

6. Ընթացիկ հարցեր:

6.1. ԵՊՀ ԻՄ-ի հեռակա ուսուցման ‹‹Պատմություն›› մասնագիտության 5-րդ կուրսի ուսանողուհի Հրաձին Սանասարի Ապերյանին ֆինանսական օգնություն ցուցաբերելու մասին: / Զեկուցող **Ա. Հ. Մակարյան** /

6.2. ԵՊՀ ԻՄ-ի «Հայոց պատմության և հասարակագիտության» ամբիոնի ասիստենտ, քաղաքական գիտությունների թեկնածու Հովսեփ Իսրայելի Մովսեսյանի՝ դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելու հարցը: (Զեկուցող **Մ. Աթոյան**)

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

<u>Օրակարգի առաջին՝</u> «ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում›› հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը: Նա նշեց, որ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացված 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի գիտխորհրդի նիստերի ժամանակացույցի նախագիծը կազմվել է՝ հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական ծրագիրը, ուսումնական ժամանակացույցները, խորհրդակցելով ԵՊՀ ԻՄ-ի բոլոր ստորաբաժանումների ղեկավարների հետ:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Վ. Ավագյանը:

ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը նշեց, որ ԵՊՀ-ի գիտական խորհրդի նիստերի ժամանակացույցը դեռ չի հաստատվել, և այն

հաստատվելուց հետո հնարավոր է լինեն որոշ լրացումներ: Այնուհետև հավանություն տրվեց և առաջարկվեց հաստատել գիտական խորհրդի 2019-2020՝ ուստարվա առաջին կիսամյակի նիստերի ժամանակացույցը՝ առանց փոփոխությունների:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին.***

ՈՐՈՇՈՒՄ 40/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 28-րդ կետի 2-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2019-2020՝ ուստարվա առաջին կիսամյակի նիստերի ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Օրակարգի երկրորդ՝</u> «2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հասատատում» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանի հաղորդումը:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում ունենք թվով 13 անվանական կրթաթոշակ, որից 10-ը ԵՊՀ ԻՄ-ի բուջեի հաշվին, իսկ 3-ը արտաբյուջետային: Ա. Դավթյանը նշեց, որ ֆակուլտետների գիտական խորհուրդները քննարկել և մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանն են ներկայացրել ԵՊՀ ԻՄ-ում գործող անվանական կրթաթոշակների հավակնող ուսանողների անունները:

Ա.Դավթյանը նշեց, որ 13 անվանական կրթաթոշակների համար ներկայացվել են 10 ուսանող.

2019-2020 ուստարվա առաջին կիսամյակում անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների ցուցակ

N	Ա.Ա.Հ.	Մասնագիտություն	Կուրս	Կրթաթոշակի անվանումը
1	Տիգրան Սերյոժայի Գասպարյան	Քարտեզագրություն և կադաստրային գործ	3-րդ	Վազգեն Սարգսյան
2	Գոհար Աշոտի Մխիթարյան	Հայոց լեզու և գրականություն	3-րդ	Մոնթե Մելքոնյան
3	Աստղիկ Արթուրի Ղազարյան	Հայոց լեզու և գրականություն	4-րդ	Իջևան
4	Ռոզա Արմենի Մելքումյան	Հայոց լեզու և գրականություն	4-րդ	Գրիգոր Նարեկացի
5	Գերասիմ Սամվելի Ալավերդյան	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	4-րդ	Համլետ Կարայան
6	Տիգրանուհի Վարուժանի Թիրաբյան	Տնտեսագիտություն	4-րդ	Շավարշ Մարգարյան
7	Անի Արտակի Ասրյանին	Անգլերեն լեզու և գրականություն	4-րդ	ԵՊՀ
8	Վանուհի Սուրենի Հարությունյանին	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	4-րդ	Դավիթ Անհաղթ
9	Լարիդա Արարատի Ղազումյան	Պատմություն	4-րդ	Մխիթար Գոշ
10	Վահիդա Արմենի Խոջայան	Օտար լեզու և գրականություն	4-րդ	Շառլ Ազնավուր

Այնուհետև ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը քվեարկության դրեց վերոհիշյալ ուսանողներին 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակում անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին.***

Որոշում 40/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը՝ համաձայն հավելված 2-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

Օրակարգի երրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ի 2020թ.-ի առկա ուսուցմամբ ընդունելության բակալավրի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի քննարկում» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումը: Նա հավելեց՝ եթե կան առաջարկներ որևէ մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագիր ունենալու վերաբերյալ, ապա կարող են ներկայացնել իրենց առաջարկները:

Ա. Մակարյանը նշեց, որ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի դիմորդների քանակը բավականաչափ է, անցած տարի

դիմել են մոտ 23 հոգի, ընդունվել են 12-ը, իսկ այս պահին հեռակա ուսուցմամբ ունենք 23 դիմորդ, այսինքն՝ կա հետաքրքրություն: ‹‹Ռուսաց լեզու գրականություն›› մասնագիտությունը երկար ժամանակ մեր կողմից խոստացված կրթական ծրագիր է, անցած տարի ունեցել ենք ընդունելություն և ունենք 5 հոգանոց խումբ առկա բաժնում: Հույս ունենք, որ մեր կողմից ձեռնարկվելիք ագրեսիվ տեղեկատվական աշխատանքները ավագ դպրոցներում կավելացնեն այս մասնագիտությամբ դիմորդների քանակը: Կիրառական արվեստի ֆակուլտետում ունենք 2 կրթական ծրագիր՝ ‹‹Դիզայն›› և ‹‹Դեկորատիվ-կիրառական արվեստ››, որոնց նկատմամբ մարզի հանրության կողմից դեռևս կա հետաքրքրություն: ‹‹Պատմություն›› մասնագիտությունը մեր համար ավանդական է, այս պահի դրությամբ հեռակա ուսուցմամբ ունենք 20 դիմորդ: Օտար լեզուներից ‹‹Անգլերեն լեզու և գրականություն›› կրթական ծրագրի հետ կապված խնդիր չկա, հետաքրքրությունը գնալով մեծանում է, դիմորդների կրթական մակարդակը ևս գնալով բարձրանում է. ունենք 25 հոգանոց նորմալ խումբ, ինչը չի կարելի ասել ‹‹Ֆրանսերեն լեզու և գրականություն›› մասնագիտության վերաբերյալ, այն եղել է մեզ համար ավանդական, բայց դիմորդների քանակը գնալով նվազում է: ‹‹Հոգեբանություն›› կրթական ծրագրի հետ կապված կա հետաքրքրություն հեռակա ուսուցման բաժնում, այս պահին ունենք 17 դիմորդ, իսկ առկա համակարգում անցած տարի ընդունվել է 5 ուսանող: ‹‹Ֆինանսներ (ըստ ոլորտի)›› մասնագիտությամբ բավականաչափ ակտիվ է եղել անցած տարի և յուրաքնաչյուր 2 դիմորդից 1 –ը կտրվել է, հեռակայում այս պահին ունենք 7 դիմորդ, այս կրթական ծրագրի իրականացումը բավականին բարելավվել է ՀՀ կենտրոնական բանկի հետ համագործակցության շնորհիվ, որն իր հերթին բերել է այս մասնագիտության նկատմամբ հետաքրքրության աճի: ‹‹Բնապահպանություն և բնօգտագործում›› կրթական ծրագիրը անցած տարի հայտագրեցինք և ունեցանք 0 ընդունված, սակայն, ելնելով տարածաշրջանի առանձնահատկություններից ճիշտ չի լինի այս մասնագիտությունը

չհայտագրելը, իսկ հեռակա ուսուցման համակարգում ունենք 9 դիմորդ: «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրում կունենանք բավականաչափ դիմորդներ, շեշտադրում ենք անում այս մասնագիտության վրա, կունենանք նոր լաբորատորիա, Սիներջի, GG և SS ոլորտի այլ ընկերությունների հետ համագործակցությունը կառաջացնի լրացուցիչ մոտիվացիա և կունենաք բավականաչափ դիմորդներ, անհրաժեշտ է բոլոր հնարավոր միջոցներով մոտիվացնել դիմորդներին այս մասնագիտության նկատմամբ: «Զբոսաշրջություն» կրթական ծրագրով ամեն տարի կայուն ունենում ենք 20 ուսանող և ունենք կայուն հետաքրքրություն:

Այնուհետև, Ա. Մակարյանի առաջարկով, Ա. Դավթյանը ներկայացրեց ընդունելության քննություններում տեղի ունեցած փոփոխությունները. նա նշեց, որ անցած տարվա համեմատ փոփոխություն եղել է միայն «Բնապահպանություն և բնօգտագործում» կրթական ծրագրով ընդունելության համար, մրցութային եղել է միայն կենսաբանություն առարկան, այս տարի՝ կենասբանություն կամ ֆիզիկա, որը դիմորդներին կընձեռնի լրացուցիչ հնարավորություն:

Արտահայտվեցին – ԵՊՀ բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը, ԵՊՀ ԻՄ-ի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի փոխդեկան Վ. Աղաբաբյանը, Հեռակա ուսուցման բաժնի վարիչ Մ. Զուրաբյանը, Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Վ. Ավագյանը, ՄԿՊԿ բաժնի վարիչ Լ. Բեգինյանը, Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Ա.

Հովակիմյանը, ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Աթոյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ Մ. Միքայելյանը և այլոք:

Հնչեցին տարբեր առաջարկներ տարբեր կրթական ծրագրերի ընդունելության քննությունների փոփոխությունների վերաբերյալ, ինչպես նաև, առաջարկվեց դպրոցների հետ տարվող աշխատանքները առավել արդյունավետ դարձնել, եղան առաջարկներ ունենալ մագիստրոսական կրթական ծրագրեր ‹‹Ընդհանուր մանկավարժություն և մեթոդիկա›› ինչպես նաև՝ ‹‹Տնտեսագիտություն›› մասնագիտությամբ:

Տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը առաջարկեց մագիստրոսական կրթական ծրագրերի նախնական հայտերը ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն՝ առաջնորդվելով համապատասխան կարգով:

Որոշեցին.

Որոշում 40/3

Ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի չորրորդ՝</u> ‹‹Ակունք›› գիտամեթոդական հրատարակության հետագա գործունեության մասին լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումը: Նա նշեց, որ ‹‹Ակունք›› գիտամեթոդական հրատարակությունը չի ընդգրկվել ԲՈԿ-ի ցանկում, ունենք խմբագրական խորհուրդ, որ գրեթե 80% համապատասխանում է ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված մեկ այլ ամսագրի խմբագրական խորհրդի կազմի հետ, հետևաբար՝ մենք պետք է ունենաք նոր խմբագրական խորհուրդ:

Նշվեց նաև, որ ‹‹Ակունք›› գիտամեթոդական հրատարակության հրատարակման հիմնական նպատակներից են՝ խրախուսել ԵՊՀ ԻՄ-ի

պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական գործունեությունը, ինչպես նաև՝ ունենալ մեր գիտական ներկայանալի դեմքը:

Արտահայտվեցին - ԵՊՀ-ի բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր Ռաֆայել Բարխուդարյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի փոխդեկան Վ. Աղաբաբյանը, ամբիոնի վարիչներ Մ. Միքայելյանը, Վ. Ավագյանը և այլոք: Մասնավորապես առաջարկ եղավ շարունակել Ակունքի հրատարակումը, ձևավորել նոր խմբագրական կազմ, և ընդգրկվել ԲՈԿ-ի ցուցակում: Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վ. Ավագյանին առաջարկվեց ձևավորել նոր աշխատանքային խումբ, մշակել ռազմավարություն Ակունքի հետագա գործունեության վերաբերյալ և ներկայացնել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի քննարկմանը:

Որոշեցին

Որոշում 40/4

Ընդունել ի գիտություն:

Օրակարգի հինգերորդ՝ ԵՊՀ ԻՄ-ի 25-ամյակի հետ կապված միջոցառումների կազմակերպման մասին լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումը: Նա նշեց, որ ունենք հանձախումբ ԵՊՀ ԻՄ-ի 25-ամյակի հետ կապված միջոցառումների կազմակերպման համար, որը ղեկավարում է ԵՊՀ ԻՄ-ի արտաքին կապերի բաժնի վարիչ Ա. Եգանյանը, ով հիմա համառոտ կներկայացնի կատարված աշխատանքների մասին: Ընդհանուր առմամբ մեր մոտեցումներն ունեն հետևյալ տրամաբանությունը՝ կան որոշակի միջոցառումներ, որոնք, անկախ ամեն ինչից, պլանավորված են, իրականացվում են, դրանք ուղղակի նվիրվում են ԵՊՀ ԻՄ-ի 25-ամյակին, լինեն ուսանողական գիտաժողովներ, տարբեր տեսակի մրցույթներ և այլն, և որոշել ենք, որ ունենանք մեկ խոշոր, հստակ

միջոցառում, որը կամփոփի այդ միջոցառումների շարքը, այդ օրը ունենալու ենք բազմաթիվ հյուրեր:

ԵՊՀ ԻՄ-ի արտաքին կապերի բաժնի վարիչ **Ա. Եգանյանը** նշեց, հոբելյանական միջոցառումը նախատեսված է 2019 թ.-ի հոկտեմբերի 26-ին, որը վերջնական չէ և պետք է ճշտվի ԵՊՀ-ի ղեկավարության հետ, ունենք միջոցառումների հստակ ժամանակացույց, կազմված է հյուրերի ցանկը, որոնց նախօրոք կուղարկվեն հրավիրատոմսերը, հստակեցված է ելույթ ունեցողների ցանկը, այս պահին մշակվում է միջոցառումների գեղարվեստական մասը, ինչպես նաև՝ ԵՊՀ ԻՄ-ի 25-ամյակին նվիրված կրծքանշանի վերջնական տեսքը:

Որոշեցին

Որոշում 40/5

Ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր:

6.1 **Լսեցին** - ԵՊՀ ԻՄ-ի հեռակա ուսուցման «Պատմություն» մասնագիտության 5-րդ կուրսի ուսանողուհի Հրաձին Սանասարի Ապերյանին ֆինանսական օգնություն ցուցաբերելու մասին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա. Հ. Մակարյանի** հաղորդումը: Նա նշեց, որ մեր բարերարներից մեկը համաձայն ԵՊՀ ԻՄ-ի հետ կնքված պայմանագրի, փոխանցել է ԵՊՀ ԻՄ-ի հաշվարկային հաշվին 50 000 (հիսուն հազար) դրամ ԵՊՀ ԻՄ-ի սոցիալապես անապահով ուսանողի նյութական օգնություն ցուցաբերելու նպատակով, օգնությունը ստանալու համար ներկայացվել է Հեռակա ուսուցման «Պատմություն» մասնագիտության 5-րդ կուրսի ուսանողուհի Հրաձին Սանասարի Ապերյանի թեկնածությունը, նա ունի

առողջական լուրջ խնդիրներ և գտնվում է սոցիալապես խիստ անապահով վիճակում: Այնուհետև ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա. Հ. Մակարյանը** առաջարկեց այդ օգնությունը հատկացնել ‹‹Պատմություն›› մասնագիտության 5-րդ կուրսի ուսանողուհի Հրաձին Սանասարի Ապերյանին:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին***

Որոշում 40/6

Հիմք ընդունելով, ԵՊՀ ԻՄ-ի և Նիկոլայ Ալբերտի Ղալթախչյանի միջև 01.07.2019թ.-ին կնքված պայմանագիրի պահանջները, ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ ԻՄ-ի հեռակա ուսուցման ‹‹Պատմություն›› մասնագիտության 5-րդ կուրսի ուսանողուհի Հրաձին Սանասարի Ապերյանին հատկացնել 50 000 (հիսուն հազար) դրամ ֆինանսական օգնություն:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

6.2 Լսեցին - ԵՊՀ ԻՄ-ի Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ, քաղաքական գիտությունների թեկնածու Հովսեփ Իսրայելի Մովսեսյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելու հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը:

ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի 2019 թ. սեպտեմբերի 20-ի

թիվ 1 նիստում քննարկվել է նույն ամբիոնի ասիստենտ, քաղաքական գիտությունների թեկնածու Հովսեփ Իսրայելի Մովսեսյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը: Հաշվի առնելով հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները, նրան երաշխավորել են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել են ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ քաղաքական գիտությունների թեկնածու Հովսեփ Իսրայելի Մովսեսյանին շնորհելու դոցենտի գիտական կոչում:

Գիտքարտուղար Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը քննարկել է խնդրո առարկա հարցը և, ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը, արձանագրել է հետևյալը.

ԵՊՀ ԻՄ-ի Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ, քաղաքական գիտությունների թեկնածու Հովսեփ Իսրայելի Մովսեսյանը ԵՊՀ ԻՄ-ում աշխատում է 2011թ.-ից սկսած: Մինչև 2013թ.-ի հունիսի 5-ը Հ. Մովսեսյանը աշխատել է ժամավճարային հիմունքներով, 2013թ.-ի սեպտեմբերի 01-ից մինչև 2017թ.-ի սեպտեմբերի 01-ը համատեղության կարգով, իսկ 2017թ. սեպտեմբերի 01-ից սկսած հիմնական աշխատող է, որպես ԵՊՀ ԻՄ-ի Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ, իրականացնում է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Նա ունի գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքներ կատարելու անհրաժեշտ փորձ: Հովսեփ Իսրայելի Մովսեսյանի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների միջին գնահատականը 4.85 է:

Հովսեփ Իսրայելի Մովսեսյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2013 թ.-ին: Թեկնածուական ատենախոսությունը

պաշտպանելուց հետո նա ունի 3 (երեք) հրատարակած գիտական հոդված և 1 (մեկ) գիտամեթոդական աշխատանք:

Նա, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. Ենթակետի, որը նախատեսում է դոցենտի գիտական կոչում շնորհել «գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր գիտական կոչում շնորհող ԲՈՒՀ-ում ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 3 տարվա ստաժ և վերջին 3 տարվա ընթացքում այդ ԲՈՒՀ-ում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն», կարող է հավակնել դոցենտի գիտական կոչման:

Հաշվի առնելով այդ ամենը՝ կարելի է արձանագրել, որ ԵՊՀ ԻՄ-ի Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ քաղաքական գիտությունների թեկնածու Հովսեփ Իսրայելի Մովսեսյանի տվյալները բավարար են դոցենտի գիտական կոչում ստանալու համար և կարելի է միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին:

Փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու համար ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Նախագահ՝

- Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար տ.գ.դ. պրոֆեսոր Մ. Միքայելյան,

անդամներ՝

- ԵՊՀ ԻՄ-ի արհբյուրոյի նախագահ Ա. Մարգարյան,
- ԵՊՀ ԻՄ-ի ուսանողուհի Լարիդա Ղազումյան:

Այնուհետև տեղի ունեցավ փակ (գաղտնի) քվեարկություն, որի արդյունքները ներկայացրեց հանձնաժողովի նախագահ Մ. Միքայելյանը: Նա

նշեց, որ քվեարկությանը մասնակցել են ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 35 անդամներից 25-ը, որոնցից կողմ են քվեարկել 22-ը, դեմ՝ 3-ը:

Որից հետո ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Հ. Մակարյանը առաջարկեց հաստատել փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին.***

Որոշում 40/7

Հաստատել փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները:

Որի արդյունքում որոշվեց.

Որոշում 40/8

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ-ի Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ, քաղաքական գիտությունների թեկնածու Հովսեփ Իսրայելի Մովսեսյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ

ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել ԵՊՀ ԻՄ-ի Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ, քաղաքական գիտությունների թեկնածու Հովսեփ Իսրայելի Մովսեսյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ քաղաքական գիտությունների թեկնածու Հովսեփ Իսրայելի Մովսեսյանին շնորհելու դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ